

Արձանագրություն N 1

ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
նիստի

Ներկա էին՝

Նախագահությամբ՝ Պավել Սաֆարյանի

Խորհրդի անդամներ՝ Կարեն Իսախանյանը, Հայկ Այվազյանը, Արմեն Գևորգյանը,
Կարեն Սահակյանը, Մելիտա Հակոբյանը, Աբգար Մկրտչյանը, և Էմին Աբգարյանը:

Մասնակցում էին՝ Լևոն Իսախանյանը, Արթուր Մկրտչյանը, Արման Ավետիսյանը, Ալիս
Երանոսյանը, Արմեն Տերտերյանը, Արարատ Սարգսյանը, Տարոն Հակոբյանը:

Քարտուղար՝ Արծրուն Նաջարյան:

Օրակարգում քննարկման ենթակա հարցեր՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:
Զեկուցող՝ Լ.Իսախանյան:
2. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017 թվականի ընթացքում
կատարված աշխատանքների վերաբերյալ տարեկան հաշվետվություն:
Զեկուցող՝ Լ.Իսախանյան:
3. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան
գործունեության ծրագիր:
Զեկուցող՝ Լ.Իսախանյան
4. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տարեկան պահպանման
ծախսերի նախահաշիվը:
Զեկուցող՝ Լ.Իսախանյան:
5. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. չորրորդ եռամսյակի
կատարողականի գնահատումը:

Ջեկուցող՝ Ա.Սարգսյան:

6. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կատարողականի մեջ փոփոխությունների վերաբերյալ:

Ջեկուցող՝ Ա.Սարգսյան:

7. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2018թ. տարեկան ծրագիր:

Ջեկուցող՝ Ա.Սարգսյան:

8. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. երկրորդ կիսամյակի հաշվետվություն:

Ջեկուցող՝ Ա.Սարգսյան:

Օրակարգի հաստատման ժամանակ առաջարկվեց օրակարգի 2-րդ հարցը հանել և Տեսչական մարմնի կողմից վերջնական տվյալները ստանալուց և լրամշակելուց հետո հրավիրել արտահերթ նիստ և քննարկել «Կառավարությանը ներկայացվող տարբերակը: Օրակարգը հաստատվեց:

Լսեցին՝

1. Նախորդ խորհրդի նիստին տրված հանձնարարականների մասին:

- Տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիրը:

Ջեկուցող՝ Լևոն Խալիկյանը ներկայացրեց տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագիր:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը, Հայկ Այվազյանը, Մելիտա Հակոբյանը:

Առաջարկվեց՝ Հայկ Այվազյան - Տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի մեջ հստակեցնել կատարվող աշխատանքները սահմանելով հստակ ժամկետներ, Մելիտա Հակոբյան- իրազեկման աշխատանքների կատարման սկզբունք ընդունել նախօրոք իրազեկել նոր միայն ստուգում իրականացնելը:

Որոշվեց՝ հաստատել Տեսչական մարմնի 2018 թվականի տարեկան գործունեության

ծրագիրը:

Կողմ – 8:

Դեմ – 0:

- Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը:

Զեկուցող՝ Լ.Խալիկյան:

Զեկուցող Լևոն Խալիկյանը ներկայացրեց 2018թ. Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը և ներկայացրեց, որ կայքի ապահովման համար անհրաժեշտ մասնագետի համար անհրաժեշտ ծախսերը նախահաշվում ներառված չեն:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանն – առաջարկեց Տեսչական մարմնի ղեկավարին միջնորդություն ներկայացնել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի ղեկավարին համապատասխան մասնագետի հետ աշխատանքային պայմանագիր կնքելու համար:

Որոշվեց՝ Հաստատել 2018թ. տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը :

Կողմ – 8:

Դեմ – 0:

- Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. չորրորդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

Զեկուցող՝ Արարատ Սարգսյանը խորհրդին ներկայացրեց Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. չորրորդ եռամսյակի կատարողականի գնահատման արդյունքները:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանն- առաջարկեց խմբագրել 1.1 չափորոշիչի գնահատման ձևը:

Առաջարկվեց՝ Հավանություն տալ :

Որոշվեց՝ Հավանություն տալ :

Կողմ – 8:

Դեմ – 0:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կատարողականի մեջ փոփոխությունների վերաբերյալ:

Զեկուցող՝ Արարատ Սարգսյանը ներկայացրեց Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի կատարողականի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ բաժնի առաջարկությունները:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը դեմ արտահայտվեց 6-րդ կետով նախատեսված չափորոշիչի փոփոխությանը:

Առաջարկվեց՝ Ընդունել ի գիտություն :

Որոշվեց՝ Քննարկել անհրաժեշտ մոտեցումները ձևավորելուց հետո:

Կողմ – 7:

Դեմ – 1:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի գործունեության 2018թ. տարեկան ծրագիր:

Ձեկուցող՝ Արարատ Սարգսյանը ներկայացրեց որակի ապահովման բաժնի գործունեության 2018թ. տարեկան ծրագիր:

Արտահայտվեցին՝ Հայկ Այվազյանը, Մելիտա Հակոբյանը:

Որոշվեց՝ Հավանություն տալ տեսչական մարմնի որակի ապահովման բաժնի 2018թ. տարեկան ծրագրին:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2017թ. երկրորդ կիսամյակի հաշվետվություն:

Ձեկուցող՝ Արարատ Սարգսյանը ներկայացրեց տեսչական մարմնի 2017թ. երկրորդ կիսամյակի հաշվետվություն և նրանում ներառված չափորոշիչները:

Արտահայտվեցին՝ Պավել Սաֆարյանը առաջարկեց հաշվետվության մեջ ներկայացված առաջարկների վերաբերյալ անցկացնել հանդիպումներ և հաջորդ նիստի ժամանակ կրկին քննարկել:

Որոշվեց՝ Հետաձգել հարցի քննարկումը մինչև հաջորդ նիստ:

Կողմ – 8:

Դեմ – 0:

Խորհրդի նախագահ՝
Խորհրդի անդամներ՝




Պավել Սաֆարյան



Կարեն Իսախանյան



Հայկ Այվազյան



Արմեն Գևորգյան



Կարեն Սահակյան



Աբգար Մկրտչյան



Էմին Աբգարյան



Մելիտա Հակոբյան

Քարտուղար՝

Արծրուն Նաջարյան